Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 1

2021թ. Օգոստոսի 27-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2021-2022 ուս-տարվա բեռնվածությունների մասին:
2. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
3. 2021-2022 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման գործընթացի կազմակերպման, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:
4. 2021-2022 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների վերանայում, քննարկում և հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2021-2022 ուս-տարվա բեռնվածությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Հարգելի գործընկերներ, առաջարկում եմ ծանոթանալ 2021-2022 ուսումնական տարվա բեռնվածությանը:

Ամբիոնում պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության բաշխումն արդեն հաստատվել է: 2021-2022թթ. ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունները հետևյալն են.

1. Սահրադյան Արտակ Իսրայելի - տ.գ.դ., պրոֆեսոր, 1,0 հաստիք,
2. Այվազյան Տիգրան Մկրտչի - ֆ.-մ.գ.թ., պրոֆեսորի պաշտ., 0,75 հաստիք,
3. Խոդերյան Բորիս Արտյոմի - տ.գ. թ., դոցենտ, 0,75 հաստիք,
4. Օրդյան Նունե Ալբերտի - տ.գ. թ., դոցենտ, 0,5 հաստիք,
5. Վարդանյան Սոնյա Ոսկանի - տ.գ. թ., դոցենտ, 1,0 հաստիք,
6. Հարությունյան Աշոտ Հրայրի - դոցենտ, 1,0 հաստիք:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2021-2022 ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների մասին տեղեկությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ -Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: (տարեկան աշխատանքային պլանը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.-Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի և գործընթացի գրաֆիկի ժամանակացույցը: Եթե կան առաջարկներ խնդրում եմ ներկայացնել: Փոփոխությունների դեպքում նախօրոք դասախոսները կտեղեկացվեն:

Պատրաստ են նաև դասացուցակները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ -2021-2022 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման գործընթացի կազմակերպման մասին:

ՈՒսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ, այս ուսումնական տարում մեր մասնագիտության դասերը կլինեն առերես, որովհետև կպահպանվի սոցիալական հեռավորություն և մնացած պահանջները:

Classroom հարթակում պետք է տեղադրված լինի ուսումնական փաթեթները և առարկայական նկարագրերը, ինչպես նաև թեմաները և լաբորատոր փորձերի անցկացման մեթոդական ցուցումները:

Այժմ խոսքը տանք մետաղամշակման և փայտամշակման արհեստանոցի ղեկավարին և լաբորանտներին:

Գ.Տաբիրյան-Արհեստանոցում կատարվելիք լաբորատոր փորձերի համար ամեն ինչ պատրաստ է: Պահպանում ենք անվտանգության կանոնները:

Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում էլ ամեն ինչ պատրաստ է դասապրոցեսի համար՝ լաբորատոր փաթեթները և փորձերը: Լաբորատոր ժամերին կպահպանենք սոցիալական և առողջապահական պահանջները:
Հ.Հովհաննիսյան- Այս կիսամյակում 404 լաբորատորիայում նախատեսված էր կարի մոդելավորման լաբորատոր դասերը: Դասապրոցեսի համար պատրաստ են և կարի մեքենաները և կարի համար նախատեսված այլ պարագաներ: Լաբորատորիան հնարավորություն ունի պահպանելու պահանջվող նորմերը:

ՈՐՈՇԵՑԻՆ-2021-2022 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման գործընթացի կազմակերպումը ընդունել ի գիտություն:

Լաբորատորիաների վիճակը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ -2021-2022 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ, քանի որ մեր ուսումնա-մեթոդական փաթեթներն արդեն պատրաստ են, ուստի խնդրում եմ մեկ անգամ ևս ուսումնասիրել այն և վերանայել: Եթե փոփոխության կարիք լինի, փոփոխեք և առաջարկում եմ ուս. փաթեթները վերահաստատենք 27.08.2021թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2021-2022 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթները վերահաստատել 27.08.2021թ-ով:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  հ.14

Հուլիսի 2-ին տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Հաշվետվություն 2020-2021 ուս.տարվա ամբիոնի կատարած աշխատանքների քննարկում և գնահատում:
2. 2021-2022 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի բոլոր անդամները :
Միաձայն հաստատվեց օրակարգը:

1)ԼՍԵՑԻՆ-2020-2021 ուս. տարվա ամբիոնի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ Ձեզ եմ ներկայացնում ամբիոնի 2020-2021 ուս տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը.

Հաշվետու ուսումնական տարում «Տեխնոլոգիական կրթություն» ամբիոնը սպասարկել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության (առկա բակալավրիատ և մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ) թվով 120 ուսանողների ուսուցման գործընթացը:

*2020-2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների թիվն ըստ կուրսերի*

| Առկա բակալավրիատ | | Առկա մագիստրատուրա | | Հեռակա բակալավրիատ | |
|---|---|---|---|---|---|
| կուրսը | ուսանողների թիվը | կուրսը | ուսանողների թիվը | կուրսը | ուսանողների թիվը |
| 1-ին | 4 | 1-ին | 7 | 1-ին | 17 |
| 2-րդ | 3 | 2-րդ | 6 | 2-րդ | 15 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3-րդ | - | | | 3-րդ | 23 |
| 4-րդ | 8 | | | 4-րդ | 16 |
| | | | | 5-րդ | 21 |
| Ընդամենը | 15 | | 13 | | 92 |
| Ընդամենը | 120 | | | | |

Ամբիոնն առաջնորդվել է նախապես կազմված և հաստատված ուսումնական պլաններով:

2020-2021 ուս. տարում ամբիոնն ունեցել է 14 ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր:

1. ՈՒսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան.

ա) ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով:

2020-2021 ուս. տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 5243 ժամ, որը կազմել է 6.5 հաստիք և բաշխվել ամբիոնի դասախոսների միջև հետևյալ կերպ.

տեխ. գիտ. դոկ., պրոֆ.- 1,0 հաստիք,

ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., պրոֆ.պաշտ. – 1.0 հաստիք,

տեխ. գիտ. թեկն., դոց. – 2.50 հաստիք,

դոցենտ- 1,5 հաստիք:

բ) Ամբիոնի հինգ ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների գործնական - պրակտիկ սպասարկման համար:

Անհրաժեշտ է նշել, որ 2020-2021 ուս. տարվա մագիստրատուրայի ավարտական կուրսի թվով 4 մագիստրոսներին տեղավորել ենք աշխատանքի, իսկ 1-ին կուրսի 7 մագիստրանտներից 3-ը աշխատում են դպրոցներում:

գ) Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաները ներառված են եղել գործող ուսումնական պլաններում:

դ) Երկու քննաշրջաններն էլ (ձմեռային, ամառային) կազմակերպվել և անցկացվել են դեկանատի կողմից կազմված ժամանակացույցերին համապատասխան:

ե) ՈՒսուցումը կազմակերպվել է ըստ առարկայական ծրագրերի, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ քննություններով՝ կրեդիտային և գործող գնահատման համակարգերին համապատասխան:

զ) Պետական ավարտական որակավորման քննություններից առաջ ամբիոնի բոլոր առարկաների գծով կազմակերպվել են խորհրդատվություններ:

Ամբիոնի ակադեմիական առաջադիմության պատկերը պետական ավարտական որակավորման քննությունների վերաբերյալ հետևյալն է.

*2020-2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների ակադեմիական առաջադիմությունը*

| Կուրսը | ՈՒսանողների թիվը | Գնահատականները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գերազանց | լավ | բավարար | անբավարար |
| ԱԲ | 8 | 7 | 1 | - | - |
| ԱՄ | 6 | 5 | 1 | - | - |
| ՀԲ | 21 | 6 | 14 | 1 | - |

է) Ամբիոնի դասախոսական անձնակազմի ղեկավարությամբ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների համար իրականացվել են ուս. պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ:

*2020-2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների պրակտիկաները*

| Պրակտիկայի տեսակը | Կուրսը | Կիսամյակը | Պրակտիկայի տևողությունը |
|---|---|---|---|
| Մանկավարժական պրակտիկա (շարունակական) | ԱԲ2 | 2-րդ | Շաբաթական 1 օր |
| Մանկավարժական պրակտիկա (ակտիվ) | ԱԲ4 | 1-ին | 6 շաբաթ |

| | | | |
|---|---|---|---|
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ3 | 2-րդ | 4 շաբաթ |
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ4 | 1-ին | 2շաբաթ |
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ | 1-ին | 4շաբաթ |

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և ավարտական հաշվետվությունների քննարկմանն ու որակին:

2. Գիտամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքների գծով.

ա) Կազմվել են դասախոսների 2020-2021 ուս. տարվա աշխատանքային անհատական պլաններ:

բ) Ամբիոնի աշխատակիցների կողմից գիտական ժողովածուներում հրատարակվել են 2 գիտական հոդվածներ,

գ) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ամբիոնի գծով դասավանդվող առանձին առարկաների դրվածքը:

դ) Ամբիոնը համագործակցում է.

- Երևանի ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Հիդրոմետալուրգիայի և նյութագիտության պրոբլեմային լաբորատորիաների հետ:
- ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի «Նյութագիտություն» և «Հարթ թաղանթների ֆիզիկա» լաբորատորիաների հետ, որտեղ իրենց մագիստրոսական թեզերին առնչվող փորձերն են իրականացնում մեր մագիստրանտները:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ:

3. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ:

բ) Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին:

գ) Ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են թվով 16 դասալսումներ՝ ըստ հաստատված գրաֆիկի :

4. Դասախոսների վերապատարաստման աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի վարիչ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի. Սահրադյանը 2007թ-ից հանդիսանում է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ, ինչպես նաև տեղական և արտասահմանյան ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ:

բ)Ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ն.Ա. Օրդյանը ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ: Դոցենտ Նունե Օրդյանը որպես խորհրդատու ընդգրկված է ‹‹Կրթական ծրագրերի կենտրոն››-ի (ԾԻԳ) ‹‹Կրթության բարելավում›› ծրագրի շրջանակներում «Տեխնոլոգիա›› ոլորտի ‹‹Տեխնոլոգիա միջին դասարանների համար›› հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնում կատարված աշխատանքները համարել բավարար:

2) ԼՍԵՑԻՆ-2021-2022 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ 2021-2022 ուսումնական տարվա համար հաստատվել է դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունը: Հաջորդ ուսումնական տարում ամբիոնում ունենք 6 հաստիք, որոնք բաշխվել է դասախոսների վրա՝ 0,5 հաստիք - Ն.Օրդյան և Մ.Աղաջանյան, իսկ մյուս դասախոսների ծանրաբեռնվածությունը հաստատվել է 0,75 հաստիքով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին տեղեկությունը ընդունել ի գիտություն:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 3

2021թ. հոկտեմբերի 19-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատումը:
3. 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը:
4. Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին:
5. Լաբորատորիաների վիճակի քննարկումը:
6. Միջանկյալ քննությունների նախապատրաստում՝ 27.10.21-02.11.21թ. ժամկետներով և տոմսերի վերահաստատում:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ բակալավրիատի 1-ին, 2-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում, և քանի որ առաջիկա շաբաթը դասերը առցանց են, դասերը տեղի են ունենում միթով: Ամեն ինչ նորմալ է: Բակալավրների մոտ դասընթացները շարունակվում են, իսկ 2-րդ մագիստրոսները առաջին միջանկյալ գրավորներն են գրում:

2/Բ. Խոդերյան-Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Բացակայող ուսանողներ ունենք, բայց դասն ընթանում է նորմալ: Մագիստրոս 2-րդ կուրսի աշխատող ուսանողների բացակայությունները մի քիչ շատ են:

3/ Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է:

4/ Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում: Ունենք բացակայող ուսանողներ: Դասի ընթացքը նորմալ է:

5/ Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 1-ի մագիստրատուրայում և 3-րդ բակալավրիատում: Դասը առցանց է, հուսամ լավ կլինի:

6/ Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ և բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա: Բակալավրիատի ուսանողները պարտճանաչ դասին միանում են առցանց, իսկ մագիստրոս 2-րդ կուրսի մոտ միջանկյալ գրավորի շաբաթ է, որից հետո կլինի երեքշաբաթյա պրակտիկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան- Հարգելի դասախոսներ այս տարի մենք ունենք հեռակա 5-րդ կուրսում 16 ուսանող: Յուրաքանչյուրդ ներկայացրել եք ավարտական աշխատանքների թեմաները: Պետք է ուսանողներին տրվի այն, որպեսզի սկսեն աշխատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների թեմաները հաստատել:

3. ԼՍԵՑԻՆ - 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Բ.Խոդերյան-Ինձ մոտ ավարտական թեզի աշխատանք է կատարում Լիաննա Հովհաննիսյանը: Աշխատանքի մոտավորապես 90%-ը կատարված է:

2/Ա.Հարությունյան-Ես ղեկավարում եմ Սամվելյան Էլենի աշխատանքը: Աշխատանքը կատարվում է: Կան որոշակի թերություններ, որոնք կվերացվեն:

3/ Ն.Օրդյան-Իմ մագիստրանտը Նաիրի Պողոսյանն է: Աշխատանքը բավականին կատարված է: Մինչև պաշտպանություն ամեն ինչ կավարտենք:

4/Տ.Այվազյան-Ես ղեկավարում եմ Վարդանյան Սոնյայի թեզը: Աշխատանքի ընթացքը նորմալ է:

5/Ս.Վարդանյան-Ես ղեկավարում եմ Հակոբյան Արմենուհու և Հովհաննիսյան Նելլիի աշխատանքները: Արմենուհու աշխատանքը բավականին լավ կատարված է, մինչև

պաշտպանությունը ամեն ինչ պատրաստ կլինի, իսկ, քանի որ Հովհաննիսյան Նելլիի ղեկավարտը եղել է Մ.Աղաջանյանը, պետք է իր հետ էլ աշխատենք այնպես, որ վերջնական արդյունը լինի նորմալ:
6/ Ա.Սահրադյան-Իսկ իմ ղեկավարությամբ իր թեզի աշխատանքն է կատարում Անուշ Ղուլիջանյանը, որի աշխատանքից այդքան էլ գոհ չեմ: Բայց հուսամ լավ կլինի:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը համարել լավ:

4. ԼՍԵՑԻՆ - Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Օրդյան-Այս կիսամյակում նոր ենք սկսել առցանց դասընթացը: Google Classroom էլեկտրոնային հարթակում դասախոս-ուսանող կապը նորմալ է, դասերը առայժմ նորմալ են իրականացվում: Հուսանք, որ դասերի նորմալ ընթացքը շուտ կվերականգնվի:
ՈՐՈՇԵՑԻՆ- Էլեկտրոնային հարթակում դասապրոցեսի ընթացքը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ – Լաբորատորիաների վիճակի քննարկումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/ Գ.Տաբիրյան-Արհեստանոցում լաբորատոր փորձերի ընթացքը նորմալ է: Մինչև հիմա լաբորատոր դասերն իրականացվում են նորմալ:
2/ Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում դասախոսությունները իրականացվում էին նորմալ, իսկ լաբորատորի ժամերը մյուս կիսամյակում են:
3/ Հ.Հովհաննիսյան- Այս կիսամյակում 404 լաբորատորիայում իրականացվում էր կարի մոդելավորման լաբորատոր դասերը և էլեկտրատեխնիկայի գործնական դասերը: Բայց, քանի որ առայժմ անցել ենք կրթության առցանց տարբերակի, ուստի լաբորատոր դասերն էլ կլինեն առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ-Լաբորատորիաների վիճակը և դասապրոցեսի ընթացքը համարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ– Միջանկյալ քննությունների նախապատրաստում՝ 27.10.21-02.11.21թ. ժամկետներով և տոմսերի վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ–Ս.Վարդանյան-Քանի որ ուսումնական տարվա սկզբից միջանկյալ տոմսերը, հարցաշարերը հաստատվել էին 1-ին ամբիոնի նիստի ամսաթվով, ուստի,

քանի որ արդեն սկսվում են միջանկյալ քննությունները, առաջարկում եմ հարցատոմսերը վերահաստատել 19.10.2021թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջանկյալ քննությունների հարցատոմսերը վերահաստատել 19.10.2021թ-ով:

Ընթացիկ հարցեր

7.ԼՍԵՑԻՆ-Գրություն շարունակական կրթության վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ–Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ մենք ստացել են մի գրություն, որը վերաբերվում է շարունակական կթությանը /ներկայացնում եմ բովանդակությունը/:

Քննարկման արդյունքում

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ-Վերականգնել նախկինում գործող շարունակական կրթության կարգը ինչպես առկա այնպես էլ հեռկա համակարգում:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 4

2021թ. նոյեմբերի 16-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:
3. Դասալսումների քննարկում:
4. Միջանկյալ քննությունների առաջին փուլի արդյունքների ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ բակալավրիատի 1-ին, 2-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ամեն ինչ նորմալ է: Հաճախումներից դժգոհ չեմ:

2/Բ. Խոդերյան-Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Բացակայող ուսանողներ ունենք, բայց դասն ընթանում է նորմալ:

3/ Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է:

4/ Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում: Ունենք բացակայող ուսանողներ: Դասի ընթացքը նորմալ է:

5/ Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 1-ի մագիստրատուրայում և 3-րդ բակալավրիատում: Բացակա ուսանողներ ունենք:

6/ Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ և բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա: Դասերի ընթացքը նորմալ է:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ.Խոդերյան- 2021–2022 ուս.տարվա 1–ին կիսամյակում մենք ունեցել ենք հետևյալ պրակտիկաները՝

1.Ուսումնական պրակտիկա հեռակա 4–րդ կուսում, որը անց է կացվել ԻՆՖՈՒՍ կազմակերպությունում Պարոն Սահրադյանի և պարոն Այվազյանի ղեկավարությամբ: Պրակտիկան ավարտվել է, պաշտպանությունը լինելու է հունվարին առերես:

2.Մանկավարժական պրակտիկա հեռակա 5–րդ կուրսում Ա.Սահրադյանի և Ա.Հարությունյանի ղեկավարությամբ: Պրակտիկան անց է կացվել մեր ամբիոնում: Պրակտիկայի պաշտպանությունը կայանալու է հունվարին առերես:

3. Մանկավարժահետազոտական պրակտիկա մագիստրատուրայի 2–րդ կուրսում ուսանողների մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների գլխավորությամբ: Պրակտիկան ավարտվել է, դեկտեմբերի 22–ին նշանակվել է պրակտիկայի հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Պրակտիկայի կատարման ընթացքը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ - Դասալսումների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս կիսամյակում դասալսումներ եմ իրականացրել բոլոր դասախոսների մոտ թե առերես և թե առցանց տարբերակներով: Դասապրոցեսները իրականացվում էին նորմալ: Դժգոհություն չունեմ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասալսումների գործընթացը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ - Միջանկյալ քննությունների առաջին փուլի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Օրդյան-Մեր ամբիոնում առաջին կրսամյակի առաջին միջանլյալ քննությունները անցել են նորմալ: Բոլոր ուսանողները հանձնել են գրավոր աշխատանքները դրական գնահատականներով:

Երկրորդ միջանկյալ գրավորները կլինեն դեկտեմբերի 20-ից-27-ը ընկած ժամանակահատվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Միջանկյալ քննությունների առաջին փուլի արդյունքները համարել բավարար:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  հ. 5

2021թ. դեկտեմբերի 7-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:
3. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում:
4. Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը:
5. Ուսումնաճանաչողական պրակտիկայի արդյունքների քննարկում:
6. 2-րդ կուրսի մագիստրոսների թեզերի ատեստավորման մասին:
7. Հայցորդների ատեստավորումը:
8. 2021թ. ուսումնական տարվա տարեկան հաշվետվություն:
9. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1. /Բ. Խոդերյան- Դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերում: Դասապրցեսը իրականացվում է և առերես և առցանց: Ամեն ինչ նորմալ է:

2/Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ բակալավրիատի 1-ին, 2-րդ կուրսերում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ նույնպես ամեն ինչ կարգին է:

3/ Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է:

4/ Ա.Հարությունյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ բակալավր 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում: Ունենք բացակայող ուսանողներ: Դասի ընթացքը նորմալ է:

5/ Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 1-ի մագիստրատուրայում և 3-րդ բակալավրիատում: Բացակա ուսանողներ ունենք:

6/ Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ և բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ ոչ մի խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Ամբիոնում դասընթացները ընթանում են նորմալ հունով և ըստ ուսումնական ծրագրերի: Դասերը կշարունակվեն մինչև դեկտեմբերի 22-ը, որից հետո կլինի 2-րդ միջանկյալ գրավորները: Բաց թողումներ չունենք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Քանի որ առաջին միջանկյալ տոմսերը հաստատվել էին բավականին շուտ՝ առաջին ամբիոնի նիստի ժամանակ, ուստի առաջարկում եմ երկրորդ միջանկյալ ստուգման հարցատոմսերը, ինչպես նաև ամփոփիչ ստուգման քննատոմսերը հաստատել այսօրվա ամբիոնի նիստով՝ 07.12.2021թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերը հաստատել 07.12.2021թ-ով:

4. ԼՍԵՑԻՆ -Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/ Գ.Տաբիրյան-Արհեստանոցում լաբորատոր փորձերի ընթացքը նորմալ է: Մինչև հիմա լաբորատոր դասերն իրականացվում են նորմալ:

2/ Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում դասախոսությունները իրականացվում էին նորմալ, իսկ լաբորատորի ժամերը մյուս կիսամյակում են:

3/ Հ.Հովհաննիսյան- Այս կիսամյակում 404 լաբորատորիայում իրականացվում էր կարի մոդելավորման լաբորատոր դասերը և էլեկտրատեխնիկայի գործնական դասերը: Լաբորատոր ժամերը իրականացվում են նորմալ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Լաբորատորիաների վիճակը և դասապրոցեսի ընթացքը համարել նորմալ:

5. ԼՍԵՑԻՆ- Ուսումնաճանաչողական պրակտիկայի արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-2021–2022 ուս.տարվա 1–ին կիսամյակում մենք ունեցել ենք շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա բակալավրի 3–րդ կուրսում, որը անցկացվում է ՀՊՄՀ–ի հենակետային թ.57 հիմնական դպրոցում, դոցենտ Ա.Հարությունյանի ղեկավարությամբ, որը կավարտվի դեկտեմբերի 20–ին: Իսկ պրակտիկայի հաշվետվությունը ուսանողները կներկայացնեն 2-րդ կիսամյակում՝ ըստ պրակտիկայի բաժնից ստացված հրամանի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ - 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը:

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Բ.Խոդերյան-Ինձ մոտ ավարտական թեզի աշխատանք է կատարում Լիաննա Հովհաննիսյանը: Աշխատանքի մոտավորապես 90%-ը կատարված է:

   2/Ա.Հարությունյան-Ես ղեկավարում եմ Սամվելյան Էլենի աշխատանքը: Աշխատանքը կատարվում է: Կան որոշակի թերություններ, որոնք կվերացվեն:

   3/ Ն.Օրդյան-Իմ մագիստրանտը Նաիրի Պողոսյանն է: Աշխատանքը հիմնականում կատարված է: Մինչև պաշտպանություն ամեն ինչ կավարտենք:

   4/Տ.Այվազյան-Ես ղեկավարում եմ Վարդանյան Սոնյայի թեզը: Աշխատանքի ընթացքը նորմալ է:

   5/Ս.Վարդանյան-Ես ղեկավարում եմ Հակոբյան Արմենուհու և Հովհաննիսյան Նելլիի աշխատանքները: Արմենուհու աշխատանքը բավականին լավ վիճակում է, մինչև պաշտպանությունը ամեն ինչ պատրաստ կլինի, իսկ, քանի որ Հովհաննիսյան Նելլիի ղեկավարտը եղել է պր-ն Մ.Աղաջանյանը, որն այժմ չի աշխատում պետք է իր հետ էլ ինտենսիվ աշխատենք այնպես, որ վերջնական արդյունը լինի նորմալ:

   6/ Ա.Սահրադյան-Իսկ իմ ղեկավարությամբ իր թեզի աշխատանքն է կատարում Անուշ Ղուլիջանյանը, որի աշխատանքից այդքան էլ գոհ չեմ: Բայց հուսամ լավ կլինի:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը համարել լավ:

7. ԼՍԵՑԻՆ - Հայցորդների ատեստավորումը:

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Սահրադյան-Հարգելի դասախոսներ Դուք գիտեք, որ ամբիոնը ունի երկու հայցորդ՝ Աննա Հակոբյանը և Հասմիկ Այվազյանը: Վերջերս Ա.Հակոբյանը գերազանց հանձնել է վերջին քննությունը, մնում է միայն կատարած աշխատանքի վերջնական ձևավորումն ու հետագա զեկույցը ամբիոնում և նախապաշտպանությունը, իսկ թեզի պաշտպանությունը հուսամ կլինի հաջորդ տարում: Ա.Հակոբյանը ունի տպագրված 12 հոդված ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված գիտական ամսագրում, իսկ Հ.Այվազյանը ունի տպագրված 9 հոդված, իսկ 2 հոդված

պատրաստ է տպագրության: Կարծում եմ, որ Հ.Այվազյանը լավ աշխատելու դեպքում ևս կավարտի թեզը 2022թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հայցորդների ատեստավորումը համարել դրական:

8. ԼՍԵՑԻՆ- 2021թ. ուսումնական տարվա տարեկան հաշվետվություն:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ Ձեզ եմ ներկայացնում ամբիոնի 2021 ուս տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը.

Հաշվետու ուսումնական տարում «Տեխնոլոգիական կրթություն» ամբիոնը սպասարկել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության (առկա բակալավրիատ և մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ) թվով 109 ուսանողների ուսուցման գործընթացը:

*2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների թիվն ըստ կուրսերի*

| Առկա բակալավրիատ | | Առկա մագիստրատուրա | | Հեռակա բակալավրիատ | |
|---|---|---|---|---|---|
| կուրսը | ուսանողների թիվը | կուրսը | ուսանողների թիվը | կուրսը | ուսանողների թիվը |
| 1-ին | 15 | 1-ին | 3 | 1-ին | 10 |
| 2-րդ | 4 | 2-րդ | 7 | 2-րդ | 15 |
| 3-րդ | 4 | | | 3-րդ | 13 |
| 4-րդ | - | | | 4-րդ | 22 |
| | | | | 5-րդ | 16 |
| Ընդամենը | 23 | | 10 | | 76 |
| Ընդամենը | 109 | | | | |

Ամբիոնն առաջնորդվել է նախապես կազմված և հաստատված ուսումնական պլաններով:

2021 ուս. տարում ամբիոնն ունեցել է 14 ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր:

1. ՈՒսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան.

ա) ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով:

2021-2022 ուս. տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 5243 ժամ, որը կազմել է 5.0 հաստիք և բաշխվել ամբիոնի դասախոսների միջև հետևյալ կերպ.

տեխ. գիտ. դոկ., պրոֆ.- 1.0 հաստիք,

ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., պրոֆ.պաշտ. – 0.75 հաստիք,

տեխ. գիտ. թեկն., դոց. – 2.25 հաստիք,

դոցենտ- 1.0 հաստիք:

բ) Ամբիոնի հինգ ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների գործնական - պրակտիկ սպասարկման համար:

գ) Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաները ներառված են եղել գործող ուսումնական պլաններում:

դ) Երկու քննաշրջաններն էլ (ձմեռային, ամառային) կազմակերպվել և անցկացվել են դեկանատի կողմից կազմված ժամանակացույցերին համապատասխան:

ե) ՈՒսուցումը կազմակերպվել է ըստ առարկայական ծրագրերի, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ քննություններով՝ կրեդիտային և գործող գնահատման համակարգերին համապատասխան:

զ) Պետական ավարտական որակավորման քննություններից առաջ ամբիոնի բոլոր առարկաների գծով կազմակերպվել են խորհրդատվություններ:

Ամբիոնի ակադեմիական առաջադիմության պատկերը պետական ավարտական որակավորման քննությունների վերաբերյալ հետևյալն է.

*2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների ակադեմիական առաջադիմությունը*

| Կուրսը | ՈՒսանողների թիվը | Գնահատականները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գերազանց | լավ | բավարար | անբավարար |
| ԱԲ | 8 | 7 | 1 | - | - |
| ԱՄ | 6 | 5 | 1 | - | - |
| ՀԲ | 21 | 6 | 14 | 1 | - |

է) Ամբիոնի դասախոսական անձնակազմի ղեկավարությամբ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների համար իրականացվել են ուս. պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ:

*2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների պրակտիկաները*

| Պրակտիկայի տեսակը | Կուրսը | Կիսամյակը | Պրակտիկայի տևողությունը |
|---|---|---|---|
| Մանկավարժական պրակտիկա (շարունակական) | ԱԲ3 | 1-ին | Շաբաթական 1 օր |
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ3 | 2-րդ | 4 շաբաթ |
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ4 | 1-ին | 2շաբաթ |
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ5 | 1-ին | 4շաբաթ |

| | | | |
|---|---|---|---|
| Մանկավարժա-հետազոտական պրակտիկա | ԱՄ1 | 2-րդ | 3շաբաթ |
| Մանկավարժա-հետազոտական պրակտիկա | ԱՄ2 | 1-ին | 3շաբաթ |
| Ուսումնական պրակտիկա | ՀԲ4 | 2-րդ | 2շաբաթ |
| Մանկավարժական պրակտիկա (շարունակական) | ԱԲ2 | 2-րդ | Շաբաթական 1 օր |
| Մանկավարժական պրակտիկա | ՀԲ5 | 2-րդ | 4շաբաթ |

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և ավարտական հաշվետվությունների քննարկմանն ու որակին:

2. Գիտամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքների գծով.

ա) Կազմվել են դասախոսների 2021-2022 ուս. տարվա աշխատանքային անհատական պլաններ:

բ) 2021թ. ամբիոնի աշխատակիցների կողմից գիտական ժողովածուներում հրատարակվել են 1 գիտական հոդված և երկու գիտական հոդվածներ հանձնված են տպագրության:

գ) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ամբիոնի գծով դասավանդվող առանձին առարկաների դրվածքը:

դ) Ամբիոնը համագործակցում է.

- Երևանի ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Հիդրոմետալուրգիայի և նյութագիտության պրոբլեմային լաբորատորիաների հետ:
- ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի «Նյութագիտություն» և «Հարթ թաղանթների ֆիզիկա» լաբորատորիաների հետ, որտեղ իրենց

մագիստրոսական թեզերին առնչվող փորձերն են իրականացնում մեր մագիստրանտները:

- Տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ:

3. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ:

բ) Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին:

գ) Ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են թվով 11 դասալսումներ՝ ըստ հաստատված գրաֆիկի :

4. Դասախոսների վերապատարաստման աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի վարիչ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի. Սահրադյանը 2007թ-ից հանդիսանում է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ, ինչպես նաև տեղական և արտասահմանյան ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ:

բ)Ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ն.Ա. Օրդյանը ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ: Դոցենտ Նունե Օրդյանը որպես խորհրդատու ընդգրկված է «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի (ԾԻԳ) «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում «Տեխնոլոգիա» ոլորտի «Տեխնոլոգիա միջին դասարանների համար» հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնում կատարված աշխատանքները համարել բավարար:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 6

2022թ. հունվարի 25-ին ժամը 14:30 -ին տեղի կունենա Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստ

Օրակարգում՝

1. 2021-22 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

   զեկ. դոցենտ Ա.Վարդանյան

2. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:

   զեկ. դասախոսներ

3. Հեռակա 4-րդ, 5-րդ և առկա 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկների մասին:

   զեկ. Բ.Խոդերյան

4. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ–2021-22 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ս.Վարդանյան- Հարգելի դասախոսներ, քանի որ մեր ուսումնա-մեթոդական փաթեթներն պատրաստ են, ուստի խնդրում եմ մեկ անգամ ևս այն վերանայել: Եթե փոփոխության կարիք լինի, փոփոխեք և առաջարկում եմ ուս. փաթեթները վերահաստատենք 25.01.2022թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ –2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթները վերահաստատել 25.01.2022թ-ով:

2. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Ս.Վարդանյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ հեռակա 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում: Դասերը ընթացել են նորմալ, բացականեր եղել են, բայց ոչ պարբերաբար:

2/Բ.Խոդերյան-Ես դասավանդում եմ 4-րդ և 5-րդ կուրսերում: Դասընթացների ավարտին մնացել է 2 օր: Դասապրոցեսը նորմալ է, բոլորն էլ մասնակցում են դասապրոցեսին: Բացակայությունները հիմնականում կապված է կապի հետ:

3/ Ա.Հարությունյան-Ես դասավանդում եմ 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ նույն իրավիճակն է ինչ որ մյուս դասախոսների մոտ:

4/ Ն.Օրդյան- Ես դասավանդում եմ միայն 5-րդ կուրսում: Բացակա ուսանողներ համարյա թե չունենք: Դասերն ընթանում են նորմալ:
5/Տ.Այվազյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ միայն հեռակա 4-րդ կուրսում: Դասերո ինձ մոտ էլ նորմալ են ընթացել: Բացականեր եղել են, բայց քիչ:
6/Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ես դասավանդում եմ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերում: Ինձ մոտ նույնպես դասապրոցեսները նորմալ են: Բացակայող ուսանողներ գրեթե չկան:
ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Հեռակա 4-րդ, 5-րդ և առկա 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Առկա բակալավր 3-րդ կուրսի ուսանողներո իրենց շարունակական պրակտիկան անց են կացրել թիվ 57 բազային դպրոցում: Պրակտիկայի ընթացքը նորմալ էր: Պաշպանությունը անց է կացվել 24.01.2022թ-ին՝ առցանց, երեք ուսանողներն էլ ստացել են դրական գնահատական:

Հեռակա 5-րդ կուրսի ուսանողները պրակտիկայի ընթացքում կցվել են Ա.Հարությունյանի և Ս.Վարդանյանի դասերին և ակտիվորեն մասնակցել են դասապրոցեսներին:
Պաշտպանությունը նույնպես եղել է 24.01.2022թ-ին՝ առցանց, որի ժամանակ 13 ուսանող ստացել են դրական գնահատական, իսկ 3 ուսանող չեն ներկայացել:
Հեռակա 4-րդ կուրսի ուսանողները կցված են եղել ,,Արմատ,, լաբորատորիային՝ Հասմիկ Այվազյանի ղեկավարությամբ: Դասերը անց են կացվել առցանց: Որևէ խնդիր չի եղել:
Պաշտկանությունը տեղի է ունեցել 25.01.2022թ-ին՝ առցանց, որի ընթացքում 18 ուսանող ստացել են դրական գնահատական, իսկ 4 ուսանող չեն ներկայացել պաշտպանությանը /ունեցել են կապի խնդիր/:
ՈՐՈՇԵՑԻՆ –Պրակտիկայի պաշտպանությունը համարել բավարար, իսկ պաշտպանությանը չներկայացած ուսանողներն իրենց պրակտիկայի պաշտպանությանը կներկայանան լուծարքի ժամանակ:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  հ. 7

2022թ. փետրվարի 15-ին  կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
զեկ. պրոֆ.Ա.Սահրադյան
2. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
զեկ.դոցենտ Ն.Օրդյան
3. “Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը: զեկ. դոցենտ Ս.Վարդանյան
4. 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:
զեկ. պրոֆ.Ա.Սահրադյան
5. Ընթացիկ հարցեր:
ա/2022թ-ի ընդունելության հարցը
բ/ Պրակտիկայի հարցը:
զեկ. պրոֆ.Ա.Սահրադյան

Նիստին ներկա էին ամբիոնի  դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ– Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ա.Սահրադյան- Հարգելի դասախոսներ, ավարտվեց առաջին կիսամյակի միջանկյալ ստուգումներն ու ամփոփիչ քննությունները: Բորոլ կուրսերում արդյունքները գոհացուցիչ են: Միայն առաջին կուրսում ունենք մեկ ուսանող՝ Սարգսյան Սուսաննա, որ ունի և վճարային պարտք և առարկայական պարտքեր: Նա դուրս է մնում համալսարանից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Հարգելի դասախոսներ հիշեցնում եմ, որ երկրորդ կիսամյակի դասերը սկսվել են փետրվարի 9-ից՝ առերես: Դասացուցակները պատրաստ են և տեղադրված են համալսարանի կայքում: Ուսանողները տեղեկացված են:
ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- “Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Այս կիսամյակում ,,Կիրառական մեխանիկա,, առարկայից կուրսային աշխատանք են կատարելու 3-րդ կուրսի ուսանողները: Քանի որ ունենք 3 ուսանող, ուստի թեմաները կհանձնարարենք ըստ մատյանի հերթական համարների:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաները հաստատել և առաջադրանքները բաշխել:

4. ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս կրսամյակում դասալսումներ կլինեն յուրաքանչյուր դասախոսի մոտ մեկ անգամ հետևյալ գրաֆիկով.

| **հհ** | **Դասախոսի անուն, ազգանուն** | **Դասալսման օր** |
|---|---|---|
| 1 | Խոդերյան Բորիս | 18.02.2022 |
| 2 | Այվազյան Տիգրան | 09.03.2022 |
| 3 | Հարությունյան Աշոտ | 30.03.2022 |
| 4 | Օրդյան Նունե | 08.04.2022 |
| 5 | Վարդանյան Սոնյա | 26.04.2022 |

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասալսումների գրաֆիկը հաստատել և ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր

Այս տիրույթում ունենք երկու խնդիր, որոնցից մեկը վերաբերվում է առկա երկրորդ կուրսի պրակտիկային, որի համար ունենք պայմանավորվածություն բազային

դպրոցի տնօրեն տիկին Տողանյանի հետ, իսկ մնացած ընթացիկ հարցերը կկարգավորի պրակտիկայի պատասխանատու պարոն Բ.Խոդերյանը:

Երկրորդ առավել կարևոր խնդիրը դա 2022թ-ի ընդունելության հարցն է: Դուք արդեն գիտեք, որ 2022թ-ի ընդունելությանը երկու քննություն են հանձնելու (Մաթեմատիկա և հայոց լեզու) այնպես, որ բոլորս պետք է այսօրվանից լրջորեն զբաղվենք մասնագիտական կողմնորոշման հարցով: Արդեն իսկ մենք մշակել ենք առաջիկա ամիսներին ամբիոնի կեղմից իրականացվող աշխատանքների գրաֆիկ, որը նախատեսում է ինչպես մեր հանդիպումները հանրակրթական դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, այնպես էլ նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Խնդրում եմ Ձեզ չափազանց լրջորեն վերաբերվեք այս տարվա ընդունելությանը:

Կարծում եմ, որ մենք այս հարցում պետք է համագործակցենք մեր այն շրջանավարտների հետ, որոնք աշխատում են թե հանրակրթական և թե հիմնական և ավագ դպրոցներում: Հավանաբար 2022թ-ի ապրիլ ամսին նպատակահարմար է հանդիպում կազմակերպել «Տնտեսագիտական կրթության» ամբիոնում մեր շրջանավարտների հետ քննարկելով «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության խնդիրները և թե լուծման ուղիները հաշվի առնելով ապագա անելիքները՝ նոր մասնագիտությունների ներառման, նոր լաբորատորիաների ստեղծման, ինչպես նաև հանրակրթական և ավագ և հիմնական դպրոցների հետ, նրանց պահանջների տեսակետները հաշվի առնելով:

Կարծում եմ, որ մենք պետք է դիմորդների մոտ փոխենք այն կարծրատիպը, որ ՀՊՄՀ-ի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությունը պատրաստում է «Աշխատանքի ուսուցման» ուսուցիչներ, այն դեպքում, երբ շատ վաղուց, առնվազն 15 տարի սա լայն ուսուցմամբ Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտացում է, որտեղ բացի լուրջ մասնագիտական և մանկավարժա-հոգեբանական ուսուցման ուսուցիչներ են պատրաստում՝ տեխնիկական–ինժեներական մտածելակերպով, հագուստի կոնստրուկտավորման և մոդելավորման, սննդի տեխնոլոգիայի, ինչպես նաև ավտոմատ կառավարման համակարգման սարքավորումների և ռոբոտոտեխնիկական համակարգերի ուսուցման ուղղությամբ: «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողները խորությամբ ուսումնասիրում են տնտեսագիտության հիմունքներն ու մարկետոլոգիան, մենեջմենտն ու բանկեր և ֆինանսներ առարկաները՝ համապատասխան պրակտիկա անցկացնելով հանրապետության առաջավոր բանկերում, որտեղ և ամեն տարի աշխատանքի են վերցնում մեր շրջանավարտներին:

Մեր շրջանավարտներն աշխատում են որպես հաշվապահներ և ֆինանսիստներ լավագույնս տիրապետելով «Հաշվապահություն և հաշվապահական հաշվառում» առարկաներին և համակարգչային $C_1$ և այլ ծրագրերին:

Մանկավարժական, ուսումնական (արտադրական, բանկային 3 շաբաթ յուրաքանչյուրը) այսինքն 6 շաբաթ դպրոցական + 3 շաբաթ արտադրական և 3 շաբաթ բանկերում պրակտիկաների ժամանակ, նրանք ստանում են տեսական գիտելիքների պրակտիկ և կիրառման մեթոդներն ու հնարավորություններ փորձնական վարվող դասավանդման ընթացքում, ինչպես նաև գործարաններում ծանոթանալով արտադրության տեխնոլոգիական գործընթացներին և ռոբոտների աշխատանքներին: Ծանոթանում են մեր բանկերի «Արարատ», «ԱՅԴԻ» ֆինանսական բոլոր գործառույթներին 3 շաբաթվա ընթացքում, որը և հանդիսանում է նրանից լավագույններին հենց պրակտիկայի հրավիրելու համար:

Նիստի նախագահ՝ Ա.Ի. Սահրադյան

Քարտուղար՝ Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 8

2022թ. մարտի 15-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. ՈՒսումնական գործընթացքների ընթացքը:
զեկ.դասախոսներ
2. 2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:
զեկ., դոցենտՍ.Վարդանյան
3. 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին:
զեկ. թեզերի ղեկավարներ
4. Մագիստոս 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպման մասին:
զեկ. դոցենտԲ.Խոդերյան
5. Առկա 3-րդ կուրսի և մագիստրոս 1-ին կուրսի միջանկյալ քննությունների նախապատրաստում: զեկ. դոցենտՆ.Օրդյան
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ– ՈՒսումնական գործընթացքների ընթացքը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Դասախոսներ- Բոլոր դասախոսները ներկայացրեցին իրենց դասապրոցեսի ընթացքը: Տեղեկացրեցին բացակայող ուսանողների մասին: Ընդհանուր առմամբ բոլոր կուրսերում դասապրոցեսն ընթանում է նորմալ: Որևէ խնդիր չկա:
ՈՐՈՇԵՑԻՆ – ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ–2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյանը ընդհանուր ներկայացրեց 2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի ընթացքի մասին և առաջարկեց, որ մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը նշանակվի ապրիլի 20-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը նշանակել ապրիլը 20-ին:

3. ԼՍԵՑԻՆ- 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Բ.Խոդերյան-Իմ ղեկավարությամբ իր թեզի աշխատանքն է կատարում
1-ին կուրսի մագիստրանտ Համլետ Պետրոսյանը որի թեման է «Սովորողների տեխնիկական ստեղծագործական ունակությունների զարգացումը կրթական ռոբոտատեխնիկայի միջոցով»: Թեման տրված է, գրականությունը նույնպես: Աշխատանքը ընթացքի մեջ է:
2/ Տ.Այվազյան-Ես աշխատում եմ Միլենա Գրիգորյանին հետ: Թեզի թեման է «Էլեկտրական եներգիայի ստացումը վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմամբ» թեմայի դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական հաստատություններում: Մագիստրանտ Մ.Գրիգորյանը ստացել է իր թեման, համապատասխան գրականությունը: Աշխատանքը ընթացքի մեջ է:

3/Ա.Հարությունյան-Ինձ մոտ էլ իր ավարտական աշխատանքն է կատարում Կարինե Սարգսյանը, որի թեման է «Փայտամշակման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցում: Կ. Սարգսյանը նույնպես ստացել է բոլոր հանձնարարականները և աշխատում է:

ՈՐՈՇԵՑԻՆ –1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ- Մագիստոս 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպման մասին:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան--Այս կրսամյակում մեր ամբիոնում պրակտիկա անց է կացվելու երկու կուրսերում՝ մագիստրոս 1-ին և բակալավր 3-րդ: 1-ին մագիստրանտները իրենց մանկավարժական պրակտիկան անց են կացնելու մարտի 30-ից ապրիլի 19-ը ՀՊՄՀ-ի Տեխնոլոգիական կրթության ամբիոնում, իսկ բակալավր 3-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվելու է մարտի 30-ից ապրիլի 19-ը «ԻՆՖՈՒՍ» կազմակերպությունում: Երկու պրակտիկաների հրամաններն արդեն պատրաստ են, ղեկավարները և ուսանողները՝ տեղեկացված:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մագիստոս 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպումը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ- Առկա 3-րդ կուրսի և մագիստրոս 1-ին կուրսի միջանկյալ քննությունների նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Հարգելի դասախոսներ քանի որ առկա 3-րդ և մագիստրոս 1-ին կուրսերի ուսանողները ունեն պրակտիկաներ մարտի 30-ից ապրիլի 19-ը ընկած ժամանակահատվածում, ուստի ըստ ուսումնական պլանի 1-ին միջանկյալ ստուգումները կլինեն մարտի 16-ից մինչև մարտի 25-ը: Գրաֆիկները արդեն պատրաստ են և տեղադրված են դասացուցակում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Առկա 3-րդ կուրսի և մագիստրոս 1-ին կուրսի միջանկյալ քննություններ մասին տեղեկությունը ընդունել ի գիտություն:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 9

2022թ. ապրիլի 15-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. ՈՒսումնական գործընթացների ընթացքը:
2. Հեռակա 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների վիճակը:
3. Ընթացիկ հարցեր:

ա/-2022թ-ի ընդունելության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:

բ/ Տեխնոլոգիական կրթության ամբիոնի դոցենտ, տեխ. գիտ. թեկ. Բորիս Խոդերյանին

պրոֆեսորի պաշտոնակատարի պաշտոնում ներկայացնելու հարցը:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ– ՈՒսումնական գործընթացքների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Դասախոսներ- Բոլոր դասախոսները ներկայացրեցին իրենց դասապրոցեսի ընթացքը: Տեղեկացրեցին բացակայող ուսանողների մասին, նաև նշեցին, որ առկա 3-րդ կուրսի ուսանողները դեռևս գնվում են ուսումնական պրակտիկայում: Ընդհանուր առմամբ բոլոր կուրսերում դասապրոցեսն ընթանում է նորմալ: Որևէ խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ– Հեռակա 5-դ կուրսի դիպլոմային աշխատանքների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Ս.Վարդանյանը- Իմ ղեկավարությամբ իրենց ավարտական աշխատանքներն են կատարում Կառլեն Սարգսյանը, Մերի Ստեփանյանը, Երանուհի Հովսեփյանը: Աշխատանքը կատարվում է, կան որոշակի թերություններ, որոնք մինչև նախապաշտպանությունը՝ կշտկվեն:

2/ Տ.Այվազյան-Ես աշխատում եմ Տաթև Հապետյանի և Գևորգ Թասլախչյանի հոտ: Նյութերը տրված են: Իրենց ակտիվությունից այնքան է գոհ չեմ, բայց հույս ունեն, որ մինչև նախապաշտպանությունը աշխատանքները կհասցնեն ավարտել:

3/Բ.Խոդերյան- Ինձ մետ էլ իրենց ավարտական աշխատանքներն են կատարում Նելլի Հովհաննիսյանը, Գոհար Գալոյանը, Էլյա Արմենյանը: Նորմալ աշխատում են, գժգոհություն չունեմ:

4/ Ն.Օրդյան-Իմ ղեկավարությամբ իրենց դիպլոմայյին աշխատանքներն են կատարում Հասկեր Բաղիրյանը և Սարգիս Գևորգյանը: Բոլոր նյութերը տրված են, գրականությունը՝ նույնպես: Ամենն ինչ նորմալ է:

5/Ա. Հարությունյան-Ես հեռաա 5-րդ կուրսում աշխատում եմ Համբարձում Թաղևոսյանի, Միլենա Օխիկյանի և Արմեն Հովսեփյանի հետ: Աշխատանքների ընթացքը նորմալ է: Հուսամ, որ մինչև նախապաշտպանություն աշխատանքները կավարտեն:

6/Ա.Սահրադյան-Իմ ղեկավարությամբ իրենց ավարտական աշխատանքներն են կատարում Մարիամ Գրիգորյանը, Սոնա Սողոմոնյանը և Աղասի Թաշչյանը: Ես այնքան էլ գոհ չեմ իրենց կատարած աշխատանքներից, բայց կարծում եմ, որ մինչև նախատաշտպանությունը աշխատանքները կունենան ավարտուն տեսք:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Ընթացիկ հարցեր:

ա/ 2022թ-ի ընդունելության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-հաջորդ շաբաթ մեկ դիմորդ կդիմի Արարատի մարզից, և ևս երեք դիմորդ՝ մեկը Հոկտեմբերյանից:

2./Ս.Վարդանյան-Ես եղել եմ ՀԱՊՀ-ի ավագ դպրոցում: Ներկայացրել եմ մասնագիտությունը:

3/ Ն.Օրդյան- Մասնագիտական կողմնորոշման նպատակով համալսարնի մի շարք դասախոսների հետ այցելել ենք Հոկտեմբերյանի հ.5 և հ 11դպրոց: Զրուցել եմ ավարտական դասարանի աշակերտների հետ: Կային շատ հետաքրքրվողներ, հատկապես արհեստակցական հոսքում:

4/Բ. Խոդերյան-Ես այցելել եմ հ.1 տարածաշրջանային քոլեջ: Ներկայացրել եմ մեր մասնագիտությունը: Եղան աշակերտներ, որոնք ցանկություն հայտնեցին դիմել մեզ մոտ:

Որոշեցին-Տեղեկությունը ընդունել ի գիտություն և շարունակել զբաղվել մասնագիտական կողմնորոշմամբ:

բ/ Տեխնոլոգիական կրթության ամբիոնի դոցենտ, տեխ. գիտ. թեկ. Բորիս Խոդերյանին

պրոֆեսորի պաշտոնակատարի պաշտոնում ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ–ՄԻՖ դեկանի տեղակալ, տեխ. գիտո. թեկնածու, դոցենտ Ն.Օրդյանը, որը նշեց, որ Բ. Խոդերյանը ունի 25 տարուց ավելի գիտամանկավարժական գործունեության փորձ, նա հեղինակել է 63 գիտատեխնիկական և գիտամեթոդական աշխատանքներ, այդ թվում 1 դասագիրք, 9 ուսումնական ձեռարկներ, 2 գյուտ։ Իմ կարծիքով Խոդերյանը արժանի է հրամանագրվելու պրոֆեսորի պաշտոնակատարի պաշտոնում։

–Ամբիոնի դոցենտ Ա.Հարությունյանը–Բ. Խոդերյանը մեր համալսարանում աշխատում է 20 տարուց ավելի, մեծ է նրա ներդրում մեր ամբիոնի գիտամեթոդական աշխատանքների զարգացման գործում, նրա նախաձեռնությամբ ամբիոնում ստեղծվել են մի շարք լաբորատոր փորձեր և ձեռնարկներ, որոնք կիրառվում են ուսումնական գործընթացում։ Ես կարծում եմ պարոն Բ. Խոդերյանը արժանի է հրամանագրվելու պրոֆեսորի պաշտոնակատարի հաստիքում։

–Պրոֆեսորի պաշտոնակատար, ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածու, պրոֆ.պաշտոնակատար Տ.Այվազյանը– Բ. Խոդերյանը հիմնականում դասավանդում է մագիստրատուրայում, ղեկավարում է մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ։ Իմ կարծիքով նա արժանի է հրամանագրվելու պրոֆեսորի պաշտոնակատարի հաստիքում։

–Տեխնոլոգիական կրթության ամբիոնի վարիչ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Սահրադյան–Բ. Խոդերյանը հմուտ դասախոս է և լավ մանկավարժ, նա 10 տարի է ինչ համակարգում է մեր ամբիոնի բոլոր պրակտիկաները, նա մասնակցում է պետական քննական հանձնաժողովի աշխատանքներին։ Բ. Խոդերյանը երկար տարիներ ֆակուլտետի խորհրդի անդամ է։ Բացի ուսումնամեթոդական աշխատանքներից Խոդերյանը երկար տարիներ հանդիսանում է ֆակուլտետի արհեստակցական կազմակերպության նախագահը։ Ես կարծում եմ, որ պարոն Բ. Խոդերյանը լիովին արժանի է հրամանագրվելու պրոֆեսորի պաշտոնակատարի հաստիքում։

Բաց քվեարկությամբ ամբիոնի աշխատակրցները

ՈՐՈՇԵՑԻՆ–Դիմել ֆակուլտետի խորհրդին դոցենտ Բ.Խոդերյանին ներկայացնել պրոֆեսորի պաշտոնակատարի հաստիքում հրամանագրվելու։

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  հ. 10

2022թ. ապրիլի 20-ին  կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի Օրակարգում՝

1. Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի նախապաշտպանության մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի  դասախոսները,  աշխատակիցները և  առկա 2-րդ կուրսի մագիստրանտները (ներկայաթերթը կցվում է):
Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ– Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի նախապաշտպանության մասին:
   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/ Արմենուհի Հակոբյան-ղեկավար տեխ.գիտ.թկնածու, դոցենտ Ս.Վարդանյան:
   Թեման- Գրաֆիկա բաժնի դասավանդման մեթոդների հետազոտումը հանրակրթական դպրոցում:
   2/ Նելլի Հովհաննիսյան- ղեկավար տեխ.գիտ.թկնածու, դոցենտ Ս.Վարդանյան:
   Թեման-«Մետաղների գեղարվեստական մշակում» բաժնի դասավանդման առանձնահատկությունների հետազոտումը 7-րդ դասարանում:
   3/ Լիանա Հովհաննիսյան-ղեկավար տեխ.գիտ.թկնածու, դոցենտ  Բ.Խոդերյան
   Թեման- Սովորողների տեխնիկական գիտելիքների զարգացման գործոնները տեխնոլոգիայի դասերին:
   4/ Անուշ  Ղուլիջանյան-ղեկավար տեխ.գիտ.դոկ., պրոֆ. Ա.Սահրադյան
   Թեման- Միջմետաղական ամրացմամբ արագահատ համաձուլվածքից պատրաստված գործիքներով չժանգոտվող պողպատի մշակման միջկոնտակտային տիրույթի հետազոտումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
   5/ Նաիրի  Պողոսյան- ղեկավար տեխ.գիտ.թկնածու, դոցենտ Ն.Օրդյան
   Թեման- Տեխնոլոգիա առարկայի «Կարպետագործություն» թեմայի առցանց դասավանդման էլեկտրոնային փաթեթի նյութերի մշակումը:
   6/ Էլեն Սամվելյան-ղեկավար դոցենտ Ա.Հարությունյան
   Թեման- Ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրների հետազոտումը:
   7/ Սոնա Վարդանյան-ղեկավար ֆիզ.մաթ.գիտ.պրոֆ.պաշտ. Տ.Այվազյան

Թեման- Հողմային էլեկտրակայաններ, նրանց կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:

Մագիստրանտները մանրամասն ներկայացրեցին իրեն կատարած աշխատանքները, սահիկահանդեսները: Պատասխանեցին դասախոսների կողմից իրենց ուղղված հարցերին:

Արտահայտվեցին դասախոսները, ովքեր իրենց կարծիքները հայտնեցին մագիստրոսների կատարված աշխատանքների վերաբերյալ՝ նշելով թերությունները: Վերջում ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Սահրադյանը, ընդլայնելով նախապաշտպանության արդյունքները, նշեց, որ գիտական սեմինարում մագիստրոսները հանդես եկան իրենց թեմաների զեկուցմամբ: Նշեց, որ մագիստրոսական թեզերը կատարված էին բարձր մակարդակով, համապատասխանում էին մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին, միաժամանակ նշեց, որ աշխատանքներում կան որոշակի թերություններ, որի վերացման և ճշգրտման համար անհրաժեշտ է ղեկավարի հետ միասին քննարկել և վերացնել այն:

Առաջարկեցին երաշխավորել պաշտպանության:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2021-2022 ուսումնական տարվա մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  հ. 11

2022թ. մայիսի 17-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի Օրակարգում՝

1. Հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները, աշխատակիցները և ուսանողները (ներկայաթերթը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Էլյա Արմենյան-ղեկավար- տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Բ.Խոդերյան

Թեման-«Պտղատու բույսերի աճեցնան ագրոտեխնիկական գործընթացները» թեմայի դասավանդումը միջին դպրոցում:

2/ Հասկեր Բադիրյան-ղեկավար- տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Ն.Օրդյան

Թեման-Տեխնիկական մտածելակերպի զարգացումը «Տեխնոլոգիա»առարկայի դասերին:

3/ Գոհար Գալոյան- ղեկավար տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Բ.Խոդերյան

Թեման-«Կաթով և կաթնամթերքներով կերակրատեսակների պատրաստումը» թեմայի դասավանդումը միջին դպրոցում:

4/Նելլի Հովհաննիսյան- ղեկավար տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Բ.Խոդերյան

Թեման-«Խմորեղեններ և դրանց պատրաստման տեխնոլոգիաները» թեմայի դասավանդման առանձնահատկությունները:

5/Սարգիս Գևորգյան- ղեկավար տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Ն.Օրդյան

Թեման-«Փայտի գեղարվեստական մշակում» թեմայի դասավանդումը համակարգչային ծրագրերի կիրառմամբ:

6/Մարիամ Գրիգորյան - ղեկավար տեխ.գիտ.դոկտոր, պրոֆ. Ա.Սահրադյան

Թեման- Կարի մեքենաների կառուցվածքի կոնստրուկտիվ առանձնահատկությունները և նրանց դասավանդումը 7-րդ դասարանում:

7/Համբարձում Թադևոսյան- ղեկավար դոցենտ Ա.Հարությունյան

Թեման- Ասինխրոն մեքենաները, նրանց կառուցվածքը, աշխատանքային սկզբունքները և կիրառման ոլորտները միջին մասնագիտական հաստատություններում:

8/Աղասի Թաշչյան - ղեկավար տեխ.գիտ.դոկտոր, պրոֆ. Ա.Սահրադյան

Թեման- Ժամանակակից դոմնային վառարաններում թուջերի ստացման տեխնոլոգիան և դասավանդման առանձնահատկությունները:

9/Տաթև Հապետյան- ղեկավար ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու, պրոֆ.պաշտ. Ս.Այվազյան

Թեման- Ժամանակակից ավտոմատիկայի հիմնական էլեմենտները: Նրա դասավանդումը միջին մասնագիտական հաստատություններում:

10/Արմեն Հովսեփյան- ղեկավար դոցենտ Ա.Հարությունյան

Թեման-<<Էլեկտրատեխնիկա>> բաժնի դասավանդման մեթոդիկան 5-րդ դասարանում:

11/Երանուհի Հովսեփյան- ղեկավար տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Ս.Վարդանյան

Թեման- Կոմպոզիցիոն նյութերի ամրանավորող բաղադրիչների տեսակները, հատկությունները և ստացման տեխնոլոգիական մեթոդները:

12/Կառլեն Սարգսյան –ղեկավար տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Ս.Վարդանյան

Թեման-«Մեխանիկական փոխանցումներ» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական հաստատություններում:

13/Սոնիկ Սողոմոնյան -ղեկավար տեխ.գիտ.դոկտոր, պրոֆ. Ա.Սահրադյան

Թեման- Գլանական միաստիճան ռեդուկտորի մուտքի լիսեռի տեխնոլոգիական երթուղու մշակումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

14/Մերի Ստեփանյան -ղեկավար տեխ.գիտ.թեկնածու., դոցենտ Ս.Վարդանյան

Թեման-«Երկրաչափական մարմինների հատումը հարթությամբ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները ավագ դպրոցի ինժեներական ենթահոսքում:

15/Միլենա Օխիկյան -ղեկավար - դոցենտ Ա.Հարությունյան

Թեման-«Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի դասավանդման մեթոդիկան 6-րդ դասարանում:

16/Գևորգ Թասլախչյան -ղեկավար- ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու, պրոֆ.պաշտ. Ս.Այվազյան

Թեման-Մխոցային պոմպեր, դրանց կառուցվածքը, աշխատանքային սկզբունքը, դասակարգումը և կիրառմա ոլորտները:

Ուսանողները ներկայացրեցին իրենց կողմից կատարած ավարտական աշխատանքները և սահիկահանդեսները:

Արտահայտվեցին տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Բ.Ա. Խոդերյանը, Ս.Ռ. Վարդանյանը, Ն.Ա. Օրդյանը, դոցենտ Ա.Հ. Հարությունյանը, և ֆիզ.- մաթ. գիտ. թեկնածու, պրոֆ. պաշտ. Տ.Մ. Այվազյանը, ովքեր նշեցին որ ուսանողները պատշաճ կերպով կատարել և ներկայացրել են իրենց կողմից կատարված ավարտական աշխատանքները: Առաջարկեցին երաշխավորել պաշտպանության:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ –2021-2022 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Հանձնարարել ղեկավարներին մինչև պաշտպանությունը հսկել թերությունների վերացումը:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  հ. 12

2022թ. մայիսի 18-ին  կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

զեկ. դասախոսներ

2. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման տոմսերի հաստատում:

3. Հեռակա բաժնի 5-րդ կուրսի 17.05-ին կայացած ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում:

4. Հեռակա բաժնի պետական ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման մասին:

5. Հեռակա բաժնի 1-4-րդ կուսերի լուծարքների ընթացքի մասին:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի  դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Նիստին ներկա էին նաև ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Գ.Դեմիրխանյանը և **Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ  դոցենտ Ս.Ասատրյանը:**

Միաձայն հաստատվեց օրակարգը:

Մինչև օրակարգին անցնելը ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան պր-ն Գ.Դեմիրխանյանը: Նա տեղեկացրեց այս տարվա դիմորդների հայտագրման մասին: Նշեց, որ նախորդ տարվա համեմատ բավականին նվազել է դիմորդների քանակը՝ ֆիզիկայի բաժին դիմել են 2, մաթեմատիկայի բաժին 11, ինֆորմատիկա՝ 2, տեխնոլոգիա՝ 5 դիմորդ:

Ս.Ասատրյանը ներկայացրեց ուսումնական պլանների և դասաժամերի փոփոխությունների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ստացած տեղեկությունները ընդունել ի գիտություն:

1. ԼՍԵՑԻՆ– Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –1/Բ.Խոդերյան- Դասավանդում եմ 1-ին մագիստրոսներին: Դասերը առցանց են: Ուսանողները միանում են դասապրոցեսին: Որևէ խնդիր չունենք: Իսկ առկա 3-րդ կուրսի ուսանողները վերջացրել են պրակտիկան: Իրենց մոտ դասերը կշարունակվի ևս մեկ շաբաթ, որից հետո կսկսվեն միջանկյալ ստուգումները:
2/ Ա.Հարությունյան- Ես դասավանդում եմ առկա 1-ին և 3-րդ կուսերում: Դասերը ընթանում են նորմալ, բացակայությունները քիչ են: Որևէ խնդիր չունենք:
3/ Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ առկա 2-րդ և 3-րդ կուրսերում: 2-րդ կուրսի ուսանողները նորմալ հաճախում են, իսկ 3-րդ կուրսի ուսանողները պրակտիկայից հետո նոր են միացել դասապրոցեսին: Երկու շաբաթից կավարտվի ուսումնական գործընթացը:
4/Ն.Օրդյան-Ես առայժմ դասավանդում եմ միայն մագիստրատուրա 1-ին կուսում, իսկ բակալավր 3-րդ կուրսը դասապրոցեսին կմիանա հաջորդ շաբաթ: Մեզ մոտ էլ դասերի հետ կապված ոչ մի խնդիր չկա:
5/Տ.Այվազյան-Նույն իրավիճակն էլ ինձ մոտ է: Մագիստրատուրա 1-ին կուսում դասերը շարունակվում են, իսկ բակալավր 3-րդ-ների հետ դասը կլինի հաջորդ շաբաթ:
6/Ա.Սահրադյան- Ինձ մոտ էլ, չնայած բացակայող ուսանողների՝ դասապրոցեսը իրականացվում է նորմալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ– 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման տոմսերի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Սահրադյան- Հարգելի դասախոսներ քանի որ միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերը և տոմսերը հաստատել էինք նախորդ կիսամյակ, ուստի առաջարկում եմ այս կիսամյակի միջանկյալ և անփոփիչ ստուգման տոմսերը հաստատել այսօրվա ամբիոնի նիստով՝ 18.06.2022թ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման տոմսերը հաստատել 18.06.2022թ-ով:

3. ԼՍԵՑԻՆ- Հեռակա բաժնի 5-րդ կուրսի 17.05-ին կայացած ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսները, որոնք նշելով իրենց ղեկավարությամբ ավարտական աշխատանք կատարող ուսանողների աշխատանքների թերությունները և բացթողումները, որոնք պետք է շտկվեն և ավարտին հասցվեն մինչև պաշտպանություն:

ՈՐՈՇԵՑԻՆ-Երաշխավորել 5-րդ կուրսի բոլոր ուսանողներին՝ մասնակցելու ամփոփիչ ավարտական քննություններին:

4. ԼՍԵՑԻՆ- Հեռակա բաժնի պետական ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ տեղեկացնեմ, որ արդեն հայտնի է ամփոփիչ պետական ավարտական քննությունների օրը և հանձնաժողովի կազմը: Այն տեղի կունենա 17.07.2022-ին: Խնդրում եմ լինել հետևողական, որպեսզի Ձեր ղեկավարությամբ կատարվող աշխատանքներում բոլոր առկա թերությունները՝ մինչև պաշտպանություն, հասցվեն ավարտին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա բաժնի պետական ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման հարցն ընդունել ի գիտություն:

5.ԼՍԵՑԻՆ- Հեռակա բաժնի 1-4-րդ կուրսերի լուծարքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Հարգելի դասախոսներ տեղեկացնում եմ, որ ավարտվել է հեռակա բաժնի 1-4-րդ կուրսերի լուծարքների ժամկետը: Կան ուսանողներ, որոնք չեն մասնակցել լուծարքին, սակայն ունեն նաև մեկ հնարավորություն՝ սեպտեմբերին, առարկան վերահանձնելու: Ունենք նաև ուսանող՝ Սարգսյան Վալերի, որը դուրս է մնում համալսարանից:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա բաժնի 1-4-րդ կուսերի լուծարքների ժամկետն ընդունել ի գիտություն:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 13

2022թ. մայիսի 24-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում» թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ հայցորդի զեկուցման, քննարկման և թեմայի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Ամբիոնի հայցորդ Գ.Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին կներկայացնի դոցենտ Ն.Օրդյանը:

2) Օրդյան Ն.-Որպես թեկնածուական ատենախոսության թեմա առաջարկվում է «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում», իսկ որպես գիտական ղեկավար՝ իր համաձայնությունն է տվել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի վարիչ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը:

Թեմայի քննարկմանը մասնակցեցին և արտահայտվեցին տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյանը, ֆիզ.մաթ.գիտ.թեկն., պրոֆ. պաշտոնակատար Տ.Ն.Այվազյանը, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Բ.Ա. Խոդերյանը, Ն.Ա. Օրդյանը, Ս.Ռ.Վարդանյանը, դոցենտ Ա.Հ.Հարությունյանը, ովքեր նշեցին, որ ատենախոսության թեման արդիական է և հիմնավորված: Առաջարկեցին հաստատել հայցորդ Գ.Գրիգորյանի գիտական ղեկավարին և ատենախոսության թեման՝ քաղվածքը ներկայացնելով Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդին քննարկելու համար:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում» վերնագրով ատենախոսության թեման, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արտակ Իսրայելի Սահրադյանի գիտական ղեկավարությամբ:

2. Դիմել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդին Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի թեմայի հաստատման հարցը քննարկելու և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու համար:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  հ.14

2022 թ. հունիսի 21-ին  ժամը 12:00-ին տեղի կունենա  Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստ

1. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

2. Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում:
3. Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

4.1. «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ս.Գ. Աղբալյանի հաշվետվության մասին:

Նիստին ներկա էին ամբիոնի  դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Դասախոսները տեղեկացրին  դասերի  ընթացքի մասին: Խոսեցին ուսանողների բացակաների և առաջադիմությունների մասին: Ընդհանուր առմամբ դասապրոցեսները ընթացել են նորմալ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ ավարտվեց այս ուսումնական տարվա պետական ավարտական քննությունները: Նշեմ, որ բոլո

ուսանողները ստացան դրական գնահատական: Մագիստրատուրայում ունենք 3 ուսանող, որոնք կստանան կարմիր դիպլոմ, մյուսները ստացել են գերազանց գնահատականներ: Իսկ հեռակա կուրսում ունեցանք 5 գերազանց, 3 լավ և 7 բավարար պատասխաններ: Կարծում եմ, ու արդյունքները գոհացուցիչ են:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Հարգելի դասախոսներ հունիսի 27-ից սկսվում է հեռակա բաժնի միջանկյալ ստուգումները: Առաջարկում եմ միջանկյալ ստուգման տոմսերը հաստատել այսօրվա անիս-ամսաթվով՝ 21.06.2022թ.-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերը հաստատել 21.06.2022թ-ով:

4. Ընթացիկ հարցեր

4.1. ԼՍԵՑԻՆ - «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության պետական ավարտական որակավորման քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ս. Գ. Աղբալյանի հաշվետվության մասին /զեկուցող Ա. Սահրադյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Սահրադյանը ներկայացրեց պետական քննական հանձնաժողովի նախագահ, ազգային պոլիտեխնիկական համալսարանի նյութագիտության և մետալուրգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխնիկական գիտությունների դոկտոր Սուրեն Գևորգի Աղբալյանի հաշվետվությունը ավարտական որակավորումների վերաբերյալ /հաշվետվությունը կցվում է/:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ տեխ. գիտ. թեկնածու, դոցենտներ Ն.Օրդյանը, Բ.Խոդերյանը. Ս.Վարդանյանը, ֆիզ.մաթ.գիտ.դոցենտ., պրոֆ. պաշտոնակատար Տ.Այվազյանը, դոցենտ Ա.Հարությունյանը, ովքեր նշեցին, որ նախագահ Ս.Գ.Աղբալյանի կողմից արված բոլոր դիտողությունները և առաջարկությունները միանգամայն ընդունելի են և կիրառելի հաջորդ ուսումնական տարիների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ-1/ Պետական ավարտական որակավորման քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ս. Գ. Աղբալյանի հաշվետվությունը պետական ավարտական որակավորումների վերաբերյալ ընդունել ի գիտություն:

2/ Քննական հանձնաժողովի նախագահ, տեխ. գիտ. դեկտոր, պրոֆեսոր Ս. Գ. Աղբալյանի հաշվետվությունում առկա դիտողությունները և առաջարկությունները ընդունել ի կատարում:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  հ.15

2022 թ. հուլիսի 1-ին  կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Հաշվետվություն 2021-2022 ուս.տարվա ամբիոնի կատարած աշխատանքների քննարկում և գնահատում:
2. 2022-2023 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի  դասախոսները և աշխատակիցները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- Հաշվետվություն 2021-2022 ուս.տարվա ամբիոնի կատարած աշխատանքների քննարկում և գնահատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր ամբիոնի 2021-2022ուս. տարվա տարեկան հաշվետվությունը, որում նշված է ամբիոնում կատարված աշխատանքների մասին: /հաշվետվությունը կցվում է/:

ՈՐՈՇԵՑԻՆ-2021-2022 ուս.տարվա  հաշվետվությունը հաստատել և ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ-2022-2023 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ամբիոնի վարիչ Ա.Սահրադյանը խոսեց ամբիոնի բեռնվածքների մասին, նշեղ, որ ամբիոնը ունի 5 հաստիք, որոնք բաշխվել է 6 դասախոսների միջև /հաստիքակազմը կցվում է/: Օգոստոսի 25-ին տեղի կունենա դասաբաշխման վերանայում՝ ըստ ուսանողների թվաքանակի:

ՈՐՈՇԵՑԻՆ-2022-2023 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունները ընդունել ի գիտություն:

| | | |
|---|---|---|
| Նիստի նախագահ՝ | | Ա.Ի. Սահրադյան |
| Քարտուղար՝ | | Ս.Ռ. Վարդանյան |